ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1964 Общественные науки

ԴՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶՈՐՍՇՏՈՐՅԱ ԴԱՍԱԳՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

(«Հայ ժողովրդի պատմություն», հատոր I, խմբագրությամբ պրոֆ. Վ. Պարսամյանի, Երևան, Հայպետհրատ, 1963, 484 էջ)։

Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի նախաձեռնությամբ ու նրա անդամների ջանքերով 1963 թ. լույս տեսավ հայ ժողովրդի պատմության շորսհատորյա ձեռնարկի առաջին հատորը՝ պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի խմբագրությամբ։ Հատորի հեղինակներն են՝ Հ. Գ. Ժամկոչյանը, Ա. Գ. Աբրահամյանը, Ստ. Տ. Մելիք-Բախշյանը և Թ. Խ. Հակոբյանը։

Ինչպես նշվում է լույս տեսած հատորի նախաբանում, այդ կարևոր աշխատությունը «նախատեսված է համալսարանի և մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմության ֆակուլտետների ուսանողության, ինչպես և ընթերցող լայն հասարակության համար»։

Սովետական ընթերցողը միայն ոգևորել կարող է նման մի հրատարակություն, որը կոչված է բավարարելու կուլտուրական շինարարության տվյալ բնագավառում վաղուց արդեն զգացվող սուր կարիքը։

«Պատմության» լույս տեսած առաջին հատորն ընդգրկում է հայ ժողովրդի կյանքը սկզբից մինչև մեր թվարկության իններորդ դարը։ Այն աչքի է ընկնում իր ռացիոնալ կառուցվածքով, հարուստ բովանդակությամբ և նյութի հանրամատչելի շարադրանքով։ Գրքի հեղինակները նպատակահարմար են գտել հատորին նախակցել հետևյալ երկու նյութերը. ա) Համառոտ տեսություն հայ ժողովրդի պատմության աղբյուրների և գրականության, բ) Հայկական լեռնաշխարհի բնությունը և Մեծ Հայքի վարչական բաժանումը։ Հատուկ ուշադրության է արժանի այն, որ գրքի երկրորդ գլուխը ամբողջապես նվիրված է Ուրարտական պետությանը՝ նրա հասարակական ու պետական կազմին, տնտեսությանը, կուլտուրային և պատմական նշանակությանը Առաջավոր Ասիայի ժողովուրդների համար։

Առաջին հայացքից ամեն ինչ բարեհաջող է, նամանավանդ որ պատմության պերիոդացումը աշխատության մեջ կատարված է համաձայն հասարակական-տնտեսական ֆորմացիաների մարքսիստական ուսմունքի։ Հայ ժողովրդի պատմությունը շաղկապվում է հարևան ժողովուրդների պատմության հետ և ներկայացվում է որպես համաշխարհային պատմության մի մասը։ Դաշվի են առնվում երկրի աշխարհագրական պայմանները և բնական հարստությունները, պատշաճ ուշադրություն և տեղ է հատկացվում ժողովրդի ազատագրական շարժումներին, նրա կուլտուրական զարգացման խնդիրներին։ Քննարկվող աշխատությունը պաշտոնապես թույլատրված է, «որպես դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար»։ Ահա թե ինչու կարևոր է այս աշխատության գնահատականը նրա սկզբունքների ճշտության տեսակետից։

Հայ պատմագրության մեջ նոր ձեռնարկած «Պատմության» I հատորը մի որոշ առաջադիմական քայլ է։ Սակայն մարքսիզմ-լենինիզմի տեսակետից չի կարող գոհացուցիչ համարվել յուրաքանչյուր աշխատություն, սոսկ նրա համար, որ հետաքրքրությամբ կարդացվում է և իր ընթերցողին մատակարարում է գիտելիքների մի որոշ պաշար։ Դրա լավագույն ապացույցներից մեկը Լեոն «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ հատորներն են, որոնք պարունակում են հարուստ փաստական նյութ և կարդացվում են մեծ հետաքրքրությամբ, սակայն կրում են զուտ նկարագրական բնույթ, աղքատիկ են տեսական բովանդակությամբ, ուրեմն նաև ընդհանրացումներով և հետևություններով։ Լեոն մեր ամենահարգված հեղինակներից է, հայ ժողովրդի կուլտուրական զարգացման պրոցեսում խոշոր դեր է խաղարել։ Հայաստանի գիտությունների

ակադեմիան էլ շատ լավ է վարվել, հրատարակելով նրա «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ հատորները, որոնք արժանի են ընթերցողի ամենաբարձր ուշադրության, բայց և այնպես մեր ուսանողների ու ասպիրանտների համար պատմության գիտական ձեռնարկի դեր կատարել չեն կարող։

Իր ժամանակին Էնգելսը նշել է, որ սոցիալիզմն արդեն գիտություն է և պահանջում է, որ իր հետ վարվեն որպես գիտության հետ։ Իսկ սոցիալիզմը գիտության աստիճանի բարձրացնելու համար Մարքսը և Էնգելսը նախապես պետք է գիտության վերածեին պատմությունը, բացահայտեին և տեսականորեն ձևավորեին պատմական շարժման ու զարգացման օրինաչափությունները՝ մի նախադրյալ, որի առկայությամբ միայն բնորոշվում է յուրաքանչյուր գիտություն ոչ միայն բնության բնագավառում, այլ նաև հասարակական ու հոգևոր կյանքում։

Իր պատմական մեծ նախատեսումներով և այդ նախատեսումների գործնական կիրառումով ավելի քան մի դարի ընթացքում, հատկապես վերջին հիսնամյակում մարքսիզմ-լենինիզմը պրակտիկորեն ապացուցեց, որ պատմությունը գիտություն է և կոչված է պրոլետարիատի դասակարգային պայքարում և սոցիալիզմի շինարարության պրոցեսում վիթխարի դեր կատարելու։ որպես մի հզոր գաղափարական գործիք։ 1848 թ. հեղափոխություններից և նամանավանդ Փարիզի կոմունայից ու պրոլետարիատի մի շարք խոշոր նվաճումներից սառսափած բուրժուազիան 19-րդ դարի երկրորդ կեսում հրաժարվեց ճանաչել պատմությունը որպես գիտություն, սկսեց ուղղակի հեգնել ու ավանտյուրիզմ հայտարարել ապագա կանխատեսելու ամեն մի փորձ, ամեն մի թեորիա։ Ելնելով իր դասակարգային շահերից, բուրժուազիան այլ կերպ վարվել չէր կարող, քանի որ բարձր զարգացման հասած կապիտալիզմը անխուսափելիորեն տանում է դեպի պրոլետարական սոցիալիստական հեղափոխություն, ստեղծում է սոցիալիզմի թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ նախադրյալները, սոցիալիզմը դարձնում է պատմական անխուսափելիություն։ Ի լուր ամբողջ աշխարհի հայտարարել կապիտալիզմի փոխարինումը սոցիալիզմով, բուրժուազիայի համար կնշանակեր ագիտացիա մղել հօգուտ իր կործանման, նպաստել պրոլետարիատի կազմակերպմանը և ավելի մոտեցնել սոցիալիստական ռևոլյուցիայի բռնկումը։

Բուրժուազիան անհնարին հայտարարեց գիտական պատմագրությունը, ուրեմն ժխտեց պատմական օրինաչափությունները և դրանց հիման վրա կատարվող պատմական կանխատեսումները, իսկ մեր ապրած դարաշրջանում բուրժուազիայի ռեակցիոն ուժերը ամեն կերպ ճգնում են արգելակել մարքսիզմ-լենինիզմի պատմագիտական ուսմունքի տարածումը, սոցիալիզմի պատմական մեծ նվաճումները ներկայացնել որպես պատահականություններ և ժամանակավոր երևույթներ։

Մեր օրերից ընդամենը տասնմեկ տարի առաջ պատմագրությունը մեզ մոտ վտարված էր հետին պլանը, զուրկ էր ստեղծագործական ուղիով առաջ ընթանալու ամեն մի հնարավորությունից, դատապարտված էր հետևելու մի այնպիսի ղեկավարի հրահանգներին ու ցուցումներին, որն ինքը պատմության խնդիրներում շափազանց հետամնաց ու սահմանափակ էր, այնքան սահմանափակ, որ պատմագիտությունը վերածեց դոգմաների ու չհիմնավորված ֆորմուլաների։ Այդ շարաբաստիկ ուղղությունն առանձնապես ծանր հետևանքներ ունեցավ պատմագիտության մեթոդիկայի համար։

ՍՄԿՊ-ի XX և XXII համագումարները պատմագիտության զարգացման լայն հորիզոններ բացելով, պահանջեցին պատմագրության ճակատի բոլոր գործիչներից խստիվ հետևել մարքսիզմ-լենինիզմի պատմական ուսմունքի հիմունքներին, գիտական աշխատանքին տալ ստեղծագործական բնույթ, օգտագործել իրենց տրամադրության տակ գտնվող ամբողջ նյութը և անշեղորեն կիրառել Մարքսի, Էնգելսի և Լենինի մշակած պատմական մեթոդիկան։

Այժմ անցնենք մեր բուն հարցին. որքանով է քննարկվող «Պատմության» առաջին հատորի հեղինակներին հաջողվել կիրառել պարտիայի համապատասխան որոշումները և օգտագործել պատմագրության վերելքի համար ստեղծված նպաստավոր նոր պայմանները։

Քննարկվող «Պատմության» առաջին հատորը, լինելով ընդհանուր առմամբ մարքսիստական և չպարունակելով որևէ շեղումներ մարքսիզմից, այնուամենայնիվ պատմագրությանը մեր օրերին առաջադրվող պահանջները բավարարելուց շատ հեռու է։ Հատորի հեղինակները խոշոր սխալ են կատարել, աննպատակահարմար գտնելով տեսական ամեն մի էքսկուրս և իրենց շարադրությանը տալով զուտ նկարագրական բնույթ։ Հատորի հեղինակները ոչ մի դաս չեն քաղել գիտական կոմունիզմի հիմնադիրների բազմաթիվ պատմական երկերից, որոնք այնքան հագեց-

ված են տեսական բովանդակությամբ։ Եվ հետևանքն այն է, որ ստացվել է մի ստվար հատոր, որը լերծ է հակամարքսիստական մտքերից ու դրույթներից, սակայն մարքսիստական մտքերով էլ չի փայլում։

«Պատմության» առաջին հատորի հեղինակները թեորիայի նկատմամբ չափազանց ժլատ են։ Նրանք ճանաչում և իրենց աշխատությունում կիրառում են թե՛ հասարակական-տնտեսական ֆորմացիաների ու դասակարգային պայքարի և թե՛ պատմական պրոցեսի օբյեկտիվ օրինաչափության մարքս-լենինյան թեորիաներն ու սկզբունքները, սակայն այդ բոլորը ճանաչում և կիրառում են սխեմատիկ կերպով, այդ թեորիաների ու սկզբունքների մասին բարձր խոսելուց, կարծեք ինչ որ վախ են կրում և վերջակետերի օգնության են դիմում յուրաքանչյուր անգամ, երբ շարադրության շարունակությունը տրամաբանորեն պահանջում է որոշ տեսական հետևություններ անել այս կամ այն ֆորմացիայի օբյեկտիվ օրինաչափությունների կամ դասակարգային պայքարի ձևերի մասին հայ կոնկրետ իրականության պայմաններում։ Հարցն այն չէ, օրինակի համար, որ ճանաչվի ստրկատիրության կամ ֆեոդալիզմի առկայությունը հայ ժողովրդի պատմության պրոցեսում, այլ այն, որ հետազոտվի և տեսականորեն ձևավորվի այդ ֆորմացիաների կոնկրետ օրինաչափությունների խնդիրը Հայաստանի պատմության մեջ, ցույց տրվի, թե ինչ նմանություն և տարբերություն է գոյություն ունեցել հայկական և օրինակի համար, հռոմեական ստրկության միջև, հայկական ֆեոդալիզմի և իրանական ու բյուզանդական կամ արաբական ֆեոդալիզմի միջև։

«Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» իր անզուգական գործում մեր օրերից յոթանասուն տարի առաջ Լենինը ռուս նարոդնիկներին բացատրում էր, թե ինչ է ներկայացնում Մարքսի «Կապիտալի» կմախքը և ապա, նրանց համառ անհասկացողությունը հաղթահարելու նպատակով, ավելացնում էր. «Ամբողջ բանն այն է, սակայն, որ Մարքսը չբավարարվեց այս կմախքով, որ նա չսահմանափակվեց սոսկ «տնտեսագիտական թեորիայով» բառիս սովորական իմաստով, որ—տվյալ հասարակական ֆորմացիայի կազմությունն ու զարգացումը բացառապես արտադրական հարաբերություններով բացատրելով—նա, այնուամենայնիվ, ամենուրեք ու մշտապես հետախուզում էր այդ արտադրական հարաբերություններին համապատասխանող վերնաշենքերը, միս ու արյուն էր տալիս կմախքին»։

Մսի ու արյան այս բացակայությունն է ահա, որ կազմում է քննարկվող առաջին հատորի աղաղակող թերությունը։

«Կապիտալը» հենց այն պատճառով այնպիսի հսկայական հաջողություն ունեցավ, շարունակում է Լենինը, որ «գերմանացի տնտեսագետը» այս գիրքն ընթերցողին ամբողջ կապիտալիստական հասարակական ֆորմացիան ցույց տվեց որպես կենդանի՝ իր կենցաղական կողմերով, արտադրական հարաբերություններին հատուկ՝ դասակարգերի անտագոնիզմի փաստական սոցիալական արտահայտությամբ, կապիտալիստների դասակարգի տիրապետությունը պաշտպանող բուրժուական քաղաքական վերնաշենքով, ազատության, հավասարության ու այլ բուրժուական գաղափարներով, բուրժուական ընտանեկան հարաբերություններով» (Նրկեր, հատ. 1, էջ 159—160)։

Դասագրքում ընդունած՝ հայ ժողովրդի պատմության պերիոդացումը արտաքուստ լիովին համապատասխանում է հասարակական-տնտեսական ֆորմացիաների մարքս-լենինյան ուսմունքին, սակայն մեր հեղինակները, թերագնահատելով դասագիրքը, որպես գիտական աշխատություն, բնավ չեն զբաղվել այն հարցով, թե արտադրողական ուժերի զարգացման պրոցեսում ֆորմացիաներից յուրաքանչյուրը ինչպես է գոյացել, աճել և տեղի տվել մի այլ ֆորմացիայի, որը արտադրողական ուժերի զարգացման, տնտեսական ու կուլտուրական վերելքի համար շատ ավելի լայն ասպարեզ, շատ ավելի նպաստավոր հասարակական պայմաններ է ներկայացնում։ Դասագիրքը շատ աղոտ հասկացողություն է տալիս այն մասին, թե հազարավոր տարիների ընթացքում նախնադարյան համայնքի գրկում ինչպես են գոյացել մասնավոր սեփականությունը, դասակարգերն ու պետությունը, տնտեսական ինչ նախադրյալներ են պահանջվել շահագործման ծագման ու տարածման համար, շահագործման վրա հիմնած դասակարգային հասարակությունը ինչու է ավելի բարձր դասվում, քան նրան նախորդած համայնական կարգը, ստրկատիրական հասարակության ծոցում ինչպես են գոյանում ֆեոդալիզմի նախադրյալները, ստրկատիրության նկատմամբ ֆեոդալիզմը ինչ առավելություններ ունի և այլն։

Ֆորմացիաների միջև ստեղծվող կապը արտադրողական ուժերի ժառանգման միջոցով և մի ֆորմացիայի վերաճումը մի այլ, ավելի բարձր ֆորմացիայի՝ պատմության այդ ամենամեծ-կան խնդիրներից մեկը գրքի հեղինակների ուսումնասիրության լուրջ առարկա չի կազմել։ Հատկապես անբավարար է բացատրված անցման պրոցեսը ստրկատիրությունից ֆեոդալական ֆորմացիային։ Ի դեպ, չի կարելի չնշել կոլոնատի էությանը և նրա պատմական դերին նվիրված հատվածի բոլորովին անմշակ վիճակը։

Ամենից շատ առարկություններ և ուղղակի զարմանք է առաջացնում ֆեոդալիզմի և ճորտության խնդրի շփոթ մեկնաբանությունը։

Գրքի X գլուխը՝ նվիրված «Սոցիալ-անտեսական հարաբերություններին վաղ ֆեոդալիզմի շրջանում» սկսվում է հետևյալ պարբերությամբ. «Հայաստանի ռազմա-ստրատեգիական հասարակությունը մեր դարաշրջանի սկզբներից սկսում է ճեղքեր տալ։ Քայքայվող հին հասարակության ծոցում աստիճանաբար զարգանում և ձևավորվում է արտադրության ֆեոդալական եղանակը։ Ստրկատիրական ավագանու փոխարեն պատմական հրապարակ է իջնում և իշխող դիրքեր գրավում հայ նախարարական ազատանին» (էջ 269)։

Եթե, նույնիսկ տեղին համարենք «ռազմա-ստրատեգիական հասարակություն» արտահայտությունը, որը կարող է վերաբերվել միայն ստրկատերերի դասակարգին, դարձյալ պարբերության առաջին նախադասությունը կլինի սխալ ձևավորված, քանի որ ճեղք տվողը եղել է ստրկատիրական ամբողջ սիստեմը։ Որի անանկացման պրոցեսում միայն, որպես այդ պրոցեսի հետևանք, կարող էին ճեղքեր գոյանալ «ռազմա-ստրատեգիական հասարակության» շենքում, ստրկատերերի հասարակական-պետական կազմակերպություններում։

Պարբերության երկրորդ նախադասությունը, լինելով էապես ճիշտ, այնուամենայնիվ կարիք ունի լուրջ լրացումների, քանի որ ոչ այդտեղ և ոչ հետագա էջերում գրքի հեղինակները կանգ չեն առնում այն կարևորագույն խնդրի վրա, թե ո՞ր դասակարգերի արտադրական հարաբերության վրա էր հանգչում արտադրության ֆեոդալական եղանակը։ Ինչպես հայտնի է, Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի բազմաթիվ ազնվականական և բուրժուական պատմաբաններ ֆեոդալիզմը տարածում են միայն իշխող կալվածատիրական-ազնվական դասակարգի տարբեր խավերի ներքին հարաբերությունների վրա, լրիվ մոռացության տալով, որ ֆեոդալիզմը ոչ այլ ինչ է, քան կալվածատիրության և գյուղացիության արտադրական հարաբերությունը և այդ հարաբերությունից բխող ու նրա վրա հանգչող հասարակական ու պետական կազմը, եկեղեցին, ընտանիքը, փիլիսոփայական ու բարոյական գաղափարները։ Ինչպես նշում է Լենինը, ֆեոդալական էր ոչ միայն կալվածատիրոջ, այլ նաև գյուղացու տնտեսությունը։ Ֆեոդալական կարգը իր թևերը տարածում էր կյանքի բոլոր բնագավառների վրա, ներթափանցում կալվածատիրոջ և գյուղացու, թագավորի և նրա պաշտոնյաների, հոգևորականի և աշխարհիկ մարդու, առևտրականի և արհեստավորի հասարակական, ընտանեկան և հոգեկան ու բարոյական կյանքը, նրանց կյանքի ամենաթաքուն անկյուններն ու ծակոտիները։ Ֆեոդալական կարգը չէր սահմանափակվում իշխող կալվածատիրական դասակարգի գոյության ներքին պայմաններով, ներկայացնելով առաջին հերթին կալվածատիրոջ և գյուղացու արտադրական հարաբերությունը և այդ հարաբերության շրջանակներում՝ կալվածատիրության և հասարակության բոլոր մյուս խավերի համակողմանի հարաբերությունը։

«Պատմության» առաջին հատորի թերություններից մեկն էլ այն է, որ նրանում ավելի ուշադրություն է նվիրվում դասային, քան դասակարգային հարաբերություններին։ Ֆեոդալների մեծամեծ դասային արտոնությունները ինքնըստինքյան ենթադրում էին հասարակության բոլոր մյուս խավերի դասային աղաղակող սահմանափակումները, սակայն, լայն իմաստով վերցրած՝ ֆեոդալական հասարակության կյանքի, նրա շրջանակներում մղվող դասակարգային պայքարի հիմքը կազմում էին ոչ թե դասային, այլ դասակարգային հարաբերությունները։ Իշխող դասակարգի ձեռքում դասային արտոնությունները լոկ գործիք էին՝ գյուղացիներին և հասարակության բոլոր մյուս խավերին իրենց դիկտատուրային ենթարկելու, նրանց դասակարգային պայքարը կանխելու և ճնշելու, իրենց տիրականությունը և իշխանական դիրքերը կանգուն պահելու համար։ Ֆեոդալական հասարակությունը բաղկացած էր դասակարգերից և ոչ թե դասերից։ Ճիշտ է, իրենց վայելած արտոնությունների շնորհիվ է միայն, որ ֆեոդալները հնարավորություն էին ընձեռում ապահովելու իրենց դասակարգային դիկտատուրան և առանց այդ արտոնությունների իրենց իշխող դիրքերը պահպանել չէին կարող, սակայն և այնպես ֆեոդալիզմի հիմքը սեփականատիրական ու դասակարգային հարաբերություններն էին։

Արտադրական հարաբերությունների վճռական դերի թերագնահատումը ցայտուն արտահայտություն է ստանում նույն պարբերության երրորդ նախադասությունում, որտեղ ասված է. «Ստրկատիրական ավագանու փոխարեն պատմական հրապարակ է իջնում և իշխող դիրքեր գրավում հայ նախարարական ազատանին։ Հարցի էությանն անտեղյակ ընթերցողը այստեղից կարող է հանդել միայն այն եզրակացությանը, որ ֆեոդալիզմի ձևավորումը կատարվում է կործանվող ստրկատիրական և վերելք ապրող ֆեոդալական ֆորմացիաների իշխող դասակարգերի խաղաղ թե մարտական հարաբերությունների նեղ շրջանակներում, առանց որևէ մասնակցության շահագործվող մասսաների կողմից։ Մինչդեռ ֆեոդալական կալվածատիրության գոյացումը, հաստատումը, ինչպես և ֆեոդալական արտոնությունների նվաճումը նորաստեղծ իշխող դասակարգի կողմից կատարվել են հարյուրավոր տարիների պատմություն ունեցող անգորույն պատերազմների միջոցով, որ մղվել են նոր կազմավորվող ֆեոդալ դասակարգի կողմից ոչ միայն ստրկատերերի և ստրկատիրական պետության, այլ նաև, որ ամենակարևորն է, գյուղատնտեսության հետ կապված աշխատավոր մասսաների դեմ՝ բռնի ուժով հողատեր ու կալվածատեր դառնալու և նվաճած գյուղացիական մասսաների հավելյալ արդյունքը յուրացնելու ոեալ հնարավորություններ ապահովելու համար։

Հայ աշխատավոր մասսան ոչ թե ապրել, այլ ֆիզիկապես ու բարոյապես տանջվել է ֆեոդալիզմի կապանքներում մեկ ու կես հազար տարի, և ընթերցողը չի կարող չպահանջել, որ հանգամանորեն ցույց տրվի, թե ստրկության լծից նոր միայն ազատագրվող այդ մասսան դասակարգային պայքարի պրոցեսում որքան ծանր ողբերգություններ պետք է վերապրեր, որքան պարտություններ պետք է կրեր, որ գլուխը խոնարհեր հաղթանակած շահագործողների հրոսակախմբերի առջև և նրանց թույլ տար քրիստոնեական եկեղեցու սրհնանքին արժանացած նոր գույնի կապանքներով շղթայել իրենց ձեռքն ու ոտքը, լեզուն ու բանականությունը։ Չի կարելի ընդունել «Կոմունիստական մանիֆեստի» հոչակավոր դրույթը դասակարգային պայքարի պատմական վճռողական դերի մասին և լռության մատնել 2—3 դար տևած մի գաժան դասակարգային պատերազմ, որի հետևանքով մի ամբողջ ժողովուրդ դատապարտվում է ֆեոդալիզմի մարդատյաց ռեժիմի տանջանքներին։ Ուիշտ է, աշխատության մեջ նշվում է, որ «ինչպես ֆեոդալական շատ երկրներում, այնպես էլ հայ իրականության մեջ, իշխել է «ուժեղ բազկի» օրենքը, որը այնքան սեղմ և պատկերավոր ձևակերպել է պատմահայրը. «Սահմանք բաղաց՝ զեն իրեանց, որքան հատանի, այնքան ունի», այլ խոսքով ասած՝ տերության սահման որոշողը ուժն է. ինչքան կարող է, այնքան էլ կկտրի» (էջ 272)։

Նախ պետք է նշել, որ ուժը հանդիսացել է «սահման որոշողը» ոչ թե ֆեոդալական շատ երկրներում, այլ անխտիր ֆեոդալական բոլոր երկրներում, և երկրորդ, որ Մ. Խորենացու երկից բերած քաղվածքում խնդիրը վերաբերում է ոչ թե գյուղացիության և կալվածատիրության միջև մղված դասակարգային պայքարին, այլ կալվածատիրական դասակարգի շրջանակներում տեղի ունեցած անվերջ ներքին պատերազմներին ու փոխադարձ զզվոտոցին։ Խորենացու մոտ «ղեն իրեանցը» բոլորովին այլ իմաստ ունի, քան Կ. Մարքսի մոտ «արտատնտեսական հարկադրանքը», որն անմիջականորեն վերաբերում է ֆեոդալիզմի երկու հիմնական դասակարգերի փոխհարաբերությանը, հատկանշում է գյուղացու արտադրած հավելյալ արդյունքի յուրացման մեթոդը կալվածատիրոջ կողմից։ Մեզ մնում է միայն զարմանք հայտնել այն առթիվ, որ ֆեոդալիզմին նվիրված այդ ստվար հատորում Մարքսի կլասիկ բնորոշմանը ոչ մի անգամ չենք հանդիպում։ Եվ չի կարելի չնշել, որ առաջին հատորի հեղինակները ընդհանրապես միայն անուշան շափով էին օգտվել ֆեոդալիզմի վերաբերյալ այն անսահման հարուստ նյութից, որ պարունակում են գիտական կոմունիզմի հիմնադիրների համապատասխան բազմաթիվ երկերը։ Նշանակալից է, որ ամբողջ գրքում Մարքսը վկայակոչվում է երեք անգամ, Էնգելսը՝ չորս անգամ, իսկ Լենինի անունը անվանաշանակում որոնելը մի բոլորովին անպտուղ աշխատանք է։

«Պատմության» առաջին հատորի ընթերցողը չի կարող նույնիսկ ուղղակի գաղափար կազմել այն մասին, թե ֆեոդալ կալվածատերը ինչպես է տարբերվում ստրկատեր կալվածատիրոջից, ինչպես և բուրժուական աշխարհի կալվածատիրոջից։ Բուրժուական պատմագրության մեջ այս պարզ խնդիրն այնքան է խճճվել, որ ոմանք կարծես հակված են անխտիր ֆեոդալներ համարել բոլոր ֆորմացիաների խոշոր կալվածատերերին, այդ թվում նաև արդի Անգլիայի խոշոր հողատերերին։ Իսկ եթե իրենց աշխատանքի պրոցեսում մեր հեղինակները դիմեին գիտական կոմունիզմի հիմնադիրների օգնությանը, առանց երկար պրպտումների կիմանային, որ ֆեոդալն օժտված է լինում բազմաթիվ իշխանական իրավունքներով, որոնցից զուրկ են ոչ միայն կապիտա-

լիստական երկրների, այլ նաև ստրկատիրական երկրների խոշոր հողատերերը։ Ենգելսը ուղղակի գրում է, որ յուրաքանչյուր ֆեոդալի իդեալն էր՝ իրեն ենթակա գյուղացիների նկատմամբ դառնալ մի իսկական անսահմանափակ միստեր՝ որի ներքին գործերին չի կարող միջամտել, նույնիսկ տվյալ երկրի թագավորը։ Կամ միթե՞ շահած չէին լինի գրքի հեղինակները, եթե, հետևելով Մարքսին, հայ ֆեոդալների հողային սեփականությունը հայտարարեին բաց թալանի ու գողության արդյունք։ Եվ որքան կփոխվեր հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության ամբողջ շարադրությունը, եթե հաշվի առնեին ռուսական ֆեոդալիզմի նկատմամբ Լենինի առաջադրած այն դրույթը, որ XX դ. սկզբում Ռուսաստանում իշխող «ճորտատեր-կալվածատերերի «հողատիրության հիմքը ստեղծվել է ճորտատիրական իրավունքի պատմությամբ, ազնվատոհմ ազնվականության կողմից դարեր շարունակ հողը կողոպտելու պատմությամբ» (հատ. 13, էջ 541)։

Խոշոր հողատիրության գոյացումը միշտ և ամենուրեք պայմանավորված է եղել գյուղացիների մասնավոր-սեփականատիրական և համայնական հողերի կողոպուտով, պետական հողերի յուրացումով, մանր կալվածատերերի կործանումով, գողության բազմապիսի եղանակների կիրառումով. սեփականակիցների ֆիզիկական ոչնչացումով և նման այլ բրեական միջոցներով։ Ինչպես հայտնի է, կալվածատերերը ոչ միայն հողի մշակությամբ չեն զբաղվում, այլև իրենց ազնվականությունը հիմնավորում են ֆիզիկական աշխատանքից ազատագրվելու փաստով։

Վերջին հարյուր տարվա հայ լիբերալ գրականությունը շատ հարուստ է երկերով, հատկապես՝ պատմական վեպերով, որոնք անվերջ ջատագովում են հայ ազնվականներին, նախարարներին ու թագավորներին, հայտարարելով դրանց բոլորին հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչներ ու պաշտպաններ, որոնց միակ հոգսը կազմել է հայ ժողովրդի բարեկեցությունը։ Շահագործման վրա հիմնած անցյալը մեծարելու գործում հայ բուրժուական պատմագրությունը գեղարվեստական գրականությունից ոչ միայն ետ չէր մնում, այլև իր հետամնաց ու անքննադատական թեորիաներով զարկ էր տալիս սխալ հայացքների տարածմանը։ Գաղտնիք չէ, որ այդ հետամնաց հայացքները, դեռևս հաղթահարված չեն նաև սովետահայ պատմավիպասանության մեջ, հանգեցնելով, ինչպես ասված է ՍՄԿՊ Ծրագրում, անցյալի իդեալականացման և ժողովուրդների պատմության մեջ սոցիալական հակասությունների սքողման։

«Պատմության» առաջին հատորը զերծ է հակագիտական այդ բոլոր հայացքներից, սակայն նրա հեղինակները չեն օգտվում հարմար առիթից՝ անհաշտ պայքար մղելու հայ ազգայնական պատմաբաններից ու գրողներից մեզ ժառանգություն մնացած հայացքների դեմ, որոնք խոչընդոտներ են ստեղծել տալու հայ ժողովրդի պատմության IV—V դարերի հարուստ սոցիալական բովանդակության գիտական վերլուծությունը և գնահատականը։ Տվյալ դեպքում մեր հեղինակները համեստորեն լռություն են պահպանում, չեզոք դիրք են գրավում, թեև նրանց համար գաղտնիք չէ, որ լռությունը և չեզոքությունը ևս բաղաքականություն են, այն էլ սովորաբար ոչ-գովելի քաղաքականություն։ Նա, ով ինտերնացիոնալիստ չէ և հրապարակորեն չի պայքարում հանուն ինտերնացիոնալիզմի, չի կարող դարձենալ նրանով, որ կտրականապես դեմ է շովինիզմին կամ չի նպաստում նրա գոյությանը։ Ինչ վերաբերում է ՍՄԿՊ Ծրագրի պահանջին՝ մղել նույն անհաշտ պայքարը «անցյալի իդեալականացման և ժողովուրդների պատմության մեջ սոցիալական հակասությունների սքողման տենդենցների դեմ», ապա այստեղ մեր հեղինակները, բոլորովին անկախ իրենց հայացքներից ու ձգտումներից, օբյեկտիվորեն պարզապես մեղանչում են, քանի որ շրջանցում են մի շարք կարևոր հարցեր, օրինակ, կալվածատիրական դասակարգի գոյացման հետ անխզելիորեն կապված թալանը, սեփականազրկումը, բռնությունը մի կողմից, գյուղացիների և այլ մանր սեփականատերերի պաշտպանողական պատերազմները, մյուս կողմից։

Անցյալի իդեալականացման և սոցիալական հակասությունների սքողման նույն տպավորությունն է ստանում ընթերցողը աշխատության այն էջերից, որոնք նվիրած են նախարարների և թագավորի փոխհարաբերություններին։ Նախարարները բնութագրվում են, որպես ժողովրդի վիճակի և պետության ապագայի մասին բնավ չհոգացող մարդիկ, իսկ թագավորներն օժտվում են այն բոլոր ձիրքերով ու առաքինություններով, որոնք պահանջվում են ժողովրդի և պետության առջև ծառացող նման վեհ խնդիրները լուծելու համար։ Եվ մեր հեղինակները, հետևելով հայ և օտար բազմաթիվ պատմաբանների օրինակին, կողմերի տարաձայնությունների աղբյուրը տեսնում են նրանում, որ նախարարները եղել են պետական իշխանության հետևողական ապակենտրոնացման, իսկ թագավորները՝ այդ նույն իշխանության առավելագույն կենտրոնացման

կողմնակիցներ ու պաշտպաններ։ Թագավորին նախ կատում են ֆեոդալ դասակարգի վերին խավերից և ապա նրան վերագրում մի քաղաքական ծրագիր, որը հակասում էր վաղ ֆեոդալիզմի վերելքի ռեալ պայմաններին ու պահանջներին։ Մինչդեռ իր դասակարգային դիրքով թագավորը նույն նախարարն էր և իր եկամուտները աճեցնելու, իր իշխանությունն ընդլայնելու և ամրապնդելու համար դիմում էր պայքարի նույն թալանչիական եղանակներին, որոնք հատուկ էին բոլոր մյուս նախարարներին.

Հայ ժողովրդի պետականության վերացման և հետագայում նրան վիճակված ողբերգական գոյության համար հայ թագավորները շատ ավելի բարձր պատասխանատվություն են կրում. քան նախարարները, քանի որ նրանց հիմնական անելիքը բազմաթիվ նախարարների համապետական կազմակերպումը և երկրի պաշտպանությունն էր արտաքին վտանգից։ Ինչպես ամենուրեք, Հայաստանում ևս ստրկատիրությունից ժառանգած միակ հարստությունը հողն էր, որի մշակման միջոցով միայն ժողովուրդը կարող էր փրկվել քաղցի սպառնացող վտանգից։ Ստրկատիրության վերացումը հանգեց ընդհանուր փլուզումի տնտեսության և պետական ղեկավարության բոլոր ոլորտներում։ Անանկացած պետություն հազիվ-հազ բարշ էր տալիս իր գոյությունը, որևէ հեղինակություն չէր վայելում ոչ աշխատավոր լայն մասսաների շարքերում և ոչ ֆեոդալների մոտ, ոչ ոքի ոչնչով օժանդակել չէր կարող, բստ այնմ նրանից որևէ սպասելիքներ չունեին ոչ ժողովուրդը և ոչ նոր միայն կազմակերպվող ֆեոդալական կալվածքները։ Այն ինչ թագավորը և նրա տրամադրության տակ գտնվող պետական ապարատը կարող էին իրենց դոյությունը պահպանել և այս կամ այն չափով կատարել, իրենց պարտավորությունները երկրի պաշտպանության գործում բացառապես ստրատավոր մասսաներից և ֆեոդալներից գանձվող նյութական միջոցներով, ինչպես և նրանցից ստացվող ռազմական ուժերով։ Հետևապես ոչ թե նախարարները կախում ունեին թագավորից, այլ թագավորն էր, որ բազմակողմանի կախման մեջ էր ընկել նախարարներից և ֆեոդալ դասակարգի ավելի ստորին խավերից։

Վաղ ֆեոդալիզմի շրջանի հայ թագավորներին հեռատեսության և հայրենասիրության փետուրներով պճնազարդող պատմաբանները, բարձր գնահատելով կենտրոնացած պետության հնարավորությունները, ելնում են բացառապես իրենց բարի ցանկություններից, հաշվի չառնելով, որ կենտրոնացած հզոր պետության գոյությունը IV—V դարերի Հայաստանում համազոր կլիներ նոր միայն ձևավորվող ֆեոդալական կարգի վերացմանը և ստրկատիրության մասնակի կամ լիակատար վերականգնմանը։ Սակայն ֆեոդալիզմը նշած դարերում արդեն այնքան խոր արմատներ էր գցել հայ իրականության մեջ, որ վերադարձը նախորդ ֆորմացիային լրիվ բացառվում էր։ Ինչ վերաբերում է անձնապես հայ թագավորներին, որոնք սնվում էին կենտրոնացած միապետության հույսերով, ապա նրանց մեջ դեռ կենդանի էին նախորդ ֆորմացիայում ձևավորված համապատասխան տրադիցիաները, մասամբ էլ նրանք ձգտում էին հետևել հարևան Բյուզանդիայի օրինակին, որտեղ այդ ժամանակ ֆեոդալիզմը դեռ ոտք չէր դրել և հզոր կայսերական իշխանությունը նախանձի առարկա էր հարևան բոլոր պետությունների համար։

Հայ թագավորները չէին էլ գիտակցում, որ երկիրը ոտք է դրել մի բոլորովին նոր ֆորմացիա, որի զարգացումն անհամատեղելի է բացարձակ միապետության հետ։ Որպես թագավորներ, նրանք չէին էլ կարող դրան ընկնել, որ իրենց հետապնդած նպատակով կործանման լայն դուռ են բացում թե ժողովրդի ու ամբողջ պետության և թե անձամբ հենց իրենց համար։ Միայն ֆեոդալների և հատկապես նախարարների կազմակերպված ուժն էր, որ նրանց կարող էր հարկադրել ընդունելու զիջումների ուղին, հարմարվելու նոր հասարակական պայմաններին, համաձայնություն կնքելու ֆեոդալների հետ, ենթարկվելու նրանց որոշումներին, դառնալու այդ նոր դասակարգի կամակատարը, ինչպես հետագայում այդ տեղի ունեցավ եվրոպական մի շարք երկրներում, որտեղ թագավորները պաշտոնապես և հանդիսավոր ներպով գլուխները խոնարհեցին ֆեոդալ դասակարգի ներկայացուցիչների առաջ, երդվեցին գործելու նրանց թելադրանքով։ Այսպիսի անհնարին է որոշել, թե հայ իրականության մեջ ֆեոդալ դասակարգի այդ ներքին պայքարն ինչով կավարտվեր, եթե Հայաստանը դատապարտված չլիներ ապրելու երկու հարևան ռազմատենչ պետությունների մուրճի ու զնդանի միջև, սակայն պետք է անվիճելի համարել, չնայած նախարարների բոլոր հակաժողովրդական ոտնձգություններին ու պետական ոճրագործություններին, որ ֆեոդալիզմի հետագա զարգացման տեսակետից նախարարների վարած քաղաքականությունը օբյեկտիվորեն շատ ավելի ճիշտ էր, քան թագավորների վարած բաղաքականությունը։

Հատկապես սխալ ու պախարակելի էր Արշակ II քաղաքականությունը, որն ավելի կսազեր Հայաստան արշաված մի նվաճողի, քան պատասխանատվության գիտակցությամբ օժտված թագավորին։ Հայ պատմագիրներն ավելի շատ զբաղվել են նրա ողբերգական վիճակով, քան նրա քաղաքականության վերլուծությամբ և օբյեկտիվ գնահատումով։ Եթե եկեղեցականների կողմից հնարած չեն գյուղացիներին ուղղած և Արշակ II-ին վերագրվող կոչերը, ապա հանձին Արշակ II-ի գործ ունենք մի քաղաքական գործչի հետ, որն անընդունակ է համարձակությունը զուգորդել բանականության հետ և իր քաղաքականության հետևանքների համար իրեն պատասխանատու համարել։ Հեգելի իմաստուն արտահայտությամբ՝ ասածը համիմացությունը սահմանափակվում է նրա համահղորությամբ։ Վաղ ֆեոդալիզմի վերելքի շրջանում, նատուրալ տնտեսության տիրապետության պայմաններում, երբ դեռևս բացակայում էին ճանապարհները և հաղորդակցության այլ միջոցները, երբ պետական գանձարանը դժվարությամբ էր ծածկում թագավորի ընտանիքի և նրա կալվածքի ծախսերը և թագավորը նյութապես անզոր էր օգնության ձեռք մեկնելու տեղերին, երկրի ցեթ կարևորագույն շրջաններում ստեղծելու վարչական և դատական ապարատ, երբ թագավորի միակ ներկայացուցիչները տեղերում թալանչի հարկահավաքներն էին, ֆեոդալները առաջադիմական գործ էին կատարում, կենտրոնացնելով իրենց ձեռքում պետական բոլոր ֆունկցիաները, դառնալով իրենց կալվածքներում իսկական ինքնակալներ։ Երկրի ապրած ծանր ողբերգության պատճառն այն էր, որ թագավորները սնվում էին արդեն խորտակված և պատմության գիրկը հանձնած միասնության վերականգնման պատրանքներով և իրենց անհեռատես ու անմիտ քաղաքականությամբ հանգում էին քայքայվածության ու դոնկիխոտության, իսկ գալլի ախորժակով օժտված խոշոր ու մանր կալվածատեր-ֆեոդալները դեռևս զուրկ էին դասակարգային գիտակցությունից, դյուխ չէին ընկնում, որ նվաճած դիրքերը պահպանելու և ամրապնդելու համար պահանջվում է ստեղծել համապետական մասշտաբով մի կենտրոնական մարմին, որի ղեկավարները գիտակցաբար ենթարկվեին դասակարգի ընդհանուր կամքին, հոժարությամբ պաշտպանեին նրա ընդհանուր համապետական շահերը։

Ինչպես վաղ ֆեոդալիզմի շրջանն ապրող բոլոր մյուս երկրներում, IV—V դարերի Հայաստանում ևս իրենց դիրքերում նոր ձևավորվող նախարարներն ու նրանց բարեկեցությանը ծառայող թալանչիական հրոսախմբերի ղեկավարները կարողացել էին արդեն ձեռք բերել գլխելու և գռփելու ամենաբարձր վարպետություն և իրենց հարստացման պրոցեսում հոգեպես այնքան էին սահմանափակվել, կուրացել ու խլացել, տարվել իրենց նվաճումներով, այնքան էին խեղդվել մոլուցք ունփականության ճիրաններում ու ստրկացել իրենց հաճույքներին, որ կալվածքի սահմաններից դուրս գտնվող աշխարհը նրանց համար դադարել էր գոյություն ունենալ։ Եվ եթե արքի որջերի այդ բնակիչները հաճախակի ընդվզում էին հայ թագավորների դեմ, անկարող լինելով ստեղծել իրենց շահերին համապատասխանող մի կառավարություն, ապա չպետք է անուշադրության մատնել նաև թագավորների քաղաքականությունը, որը թունավորված էր ոչ միայն բյուզանդիզմով, այլև ստրկատիրական պետությանը հատուկ տրադիցիաներով։ Փոխանակ որոնելու և դրսևորելու հայկական վաղ ֆեոդալիզմի ուրույն, կոնկրետ օրինաչափությունները, հայ պատմագիրները մոռացել են և շարունակում են մոռանալ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի շրջանի հասարակական հարաբերությունների և գաղափարական հոսանքների վերլուծությանը արևմտաեվրոպական և ռուսական վաղ ֆեոդալիզմին հատուկ օրինաչափությունների պատրաստի տեսանկյունից։

Եվրոպայի սլավոնական և գերմանական ժողովուրդները ստրկատիրական ֆորմացիա չեն վերապրել և նրանց առաջին պետությունները գոյացել ու ձևավորվել են վաղ ֆեոդալիզմի պայմաններում, ֆեոդալիզմի հողի վրա, ուստի որպես վաղ ֆեոդալիզմի պահանջներից բխող պետություններ, որոնց թագավորները միապետական-ինքնակալական տրադիցիաներով դեռևս վարակված չէին։ Նրանք բոլորը գոյացան Հռոմի կործանումից հետո, նրա փլատակների վրա։ Հռոմի նկատմամբ ամենուրեք տիրում էր մասսայական ատելություն։ Հռոմի պետական ձևի ընդօրինակման մասին խոսք լինել չէր կարող։ Հայաստանում, ընդհակառակը, ֆեոդալական պետությունն ստեղծվել էր ստրկատիրական պետության ձևավորումից համարյա 500 տարի հետո և ֆեոդալական հայ թագավորները, հենվելով միապետական դարավոր տրադիցիաների, իրենց նախորդներից մի քանիսի հեղինակության և իրենց պատմական ու ժառանգական մտացածին իրավունքի վրա, իրենց համար արտոնություններ էին պահանջում, որոնք չէին համա-

պատասխանում ոչ վաղ ֆեոդալիզմի հասարակական հարաբերություններին ու զարգացման ուղիներին, ոչ ժողովրդի ու իշխող դասակարգի շահերին և ոչ հենց այդ սահմանափակ մարդկանց մտավոր ու բարոյական կարողություններին։ Հայաստանի նախարարներին ու ֆեոդալ ամբողջ դասակարգին պետք է քննադատել ու դատափետել ոչ թե նրա համար, որ նրանք չէին ենթարկվում թագավորին, նրան չէին հանձնում իրենց ամրոցները և հարստությունները, այլ նրա համար, որ երկրի այդ իշխող դասակարգը անզոր գտնվեց ազատագրվելու անցյալի այդ բեկորից, համակեցության որոշ ձև ստեղծելով ֆեոդալիզմի շրջանակներում, ինչպես հետագայում այդ տեղի էր ունենում Եվրոպայի համարյա բոլոր ֆեոդալական երկրներում։

Սակայն հայ ֆեոդալների նման դատափետմանն իրոք օբյեկտիվ բնույթ տալու համար չի կարելի հաշվի չառնել նրանց վրա ծանրացող պատասխանատվության չափը մեղմացնող պատմական այնպիսի պարագաներ, որպիսիք են մինչև 7 դարի կեսը նրանց տիրապետության համեմատաբար կարճատև տևողությունը և հզոր քրիստոնեական եկեղեցու ոտնձգությունները՝ բաղաքականապես ու հոգևոր իրեն ենթարկելու թե նախարարներին և թե թագավորին։ Ֆեոդալների համար մրցումը եկեղեցու հետ ներկայացնում էր մեծամեծ դժվարություններ, քանի որ եկեղեցին մի կուռ կենտրոնացած կազմակերպություն էր և ապահովված էր արդեն ձևավորված տեսորիստական գաղափարախոսությամբ, որը հավիտենական հրավառ գեհենով էր սպառնում թե՛ շահագործող և թե՛ շահագործվող դասակարգերին։ Անհնարին չէ, որ հայ պետականության երկարատևության դեպքում կաթողիկոսը տիրանար ձախողակ թագավորների ձեռքից արդեն ընկնող իշխանությանը և Հայաստանը դարձներ մի թեոկրատիկ պետություն։

Պետք է ենթադրել, որ առաջին հատորի հեղինակները հանգամանորեն չեն մեկնաբանել մի շարք խնդիրներ, դրանք համարելով ուսանողության համար պարզ ու հասկանալի։ Այդ խնդիրների թվին է պատկանում, ի միջի այլոց, նաև վաղ ֆեոդալիզմի շրջանի պետության ձևի խնդիրը, որը քննարկվող հատորում լոկ հարևանցիորեն է լուսաբանված։ Գրքում իրավացիորեն նշված է, որ ֆեոդալիզմն իր արտադրողական ուժերով գերազանցում է ստրկատիրական ֆորմացիային, սակայն այդ ճիշտ դրույթից տրամաբանական հետևություն չի արվում այն մասին, թե պետական ձևում վաղ ֆեոդալիզմից ինչ փոփոխություններ է պահանջվում մտցնել, որպեսզի ապահովվի արտադրողական ուժերի վերելքը տվյալ ֆորմացիայի մի ավելի հասուն աստիճանի անցնելու համար։ Ինչպես վկայում է եվրոպական ֆեոդալիզմի շատ հարուստ պատմությունը, վաղ ֆեոդալիզմի շրջանում ամենուրեք տիրել են այս կամ այն չափով կենտրոնացած պետություններ, իսկ արտադրողական ուժերի հետագա զարգացման համար պահանջվել է ֆեոդալների իշխանական իրավասության գգալի ընդլայնում, մի բան, որ համազոր է պետական իշխանության մասնատմանը։ Հենց այդ ուղղությամբ էլ ընթանում էր հայ ֆեոդալների կողմից կենտրոնական իշխանության դեմ ուղղված պայքարը, և հետևապես ֆեոդալների կենտրոնախույս բաղաքականությունը պատմության այդ շրջանի համար օբյեկտիվորեն միակ պրոգրեսիվ բաղաքականությունն էր, իսկ թագավորների վարած կենտրոնձիգ բաղաքականությունը ստրկատիրական անցյալի մի վերապրուկ էր, որը երկրի տնտեսական ու կուլտուրական վերելքի նոր ֆեոդալական պահանջներին բնավ չէր համապատասխանում։

Բնական է, որ փոխադարձ ատելության և պայքարի նման բաղաքական մթնոլորտում կողմերի ժամանակավոր համաձայնությունները և համերաշխ ելույթները դառնում էին համարյա անհնարին նույնիսկ օտարների կողմից երկրի անկախությանը և գոյությանը սպառնացող վտանգի դեպքում։ Սակայն այստեղից չի կարելի հանգել այն եզրակացության, որ ֆեոդալիզմի վերելքի շահերը պետք էր զոհաբերել պատմականորեն արդեն սնանկացած միապետության վերականգնման շահերին, ու օգում կախված, իրենց դասակարգին թշնամացած ու հետեողական որևէ բաղաքականության անընդունակ թագավորների ոտնձգություններին։ Ինչպես վերը նշվեց, միակ ելքն էր՝ ֆեոդալական պետության շրջանում կատարել արմատական փոփոխություններ, որոնց միջոցով հնարավոր լիներ ապահովել թե երկրի ընդհանուր վերելքը և թե նրա պետական անկախությունը, որքան այդ հնարավոր էր ֆեոդալիզմի տիրապետության պայմաններում։

Տվյալ խնդրում հայ պատմագրությունը բարվոք է համարել հետևել արևմտաեվրոպական և ռուսական պատմագրության այն բազմաթիվ ներկայացուցիչներին, որոնք ֆեոդալական ֆորմացիան համարել են հետամնացության, բարբարոսության և խավարի մի շրջան, պատմական առաջխաղացման պրոցեսի մի երկարատև ընդհատում և Վերածննդի դարը հայտարարել են ոչ

թե պատմական զարգացման հետևանք, այլ հունական և հռոմեական կուլտուրայի «վերածնունդ» և շարունակություն։

Վերջին հարցը, որի վրա չի կարելի կանգ չառնել, վերաբերում է դասակարգային պայքարի մարքս-լենինյան ուսմունքի կիրառմանը «Պատմության» առաջին հատորում։

Աշխատության հեղինակները կանգնած են դասակարգային պայքարի տեսակետի վրա, սակայն նրանց չի հաջողվել այդ տեսակետը ուղեցույց թել դարձնել մոտ հազար հինգհարյուր տարվա պատմության շարադրության ամբողջ ընթացքում և այդ տեսակետից վերլուծության ենթարկել ու բնութագրել գեթ կարևորագույն պատմական իրադարձությունները։ Այս թերությունն առանձնապես աչքի է ընկնում գրքի այն հատվածներում, որոնք նվիրված են դասակարգերի ծագմանը Հայաստանում, պետության կազմավորման պայմաններին և նրա ձևերի փոփոխմանը, ստրկատիրության համեմատությամբ ֆեոդալիզմին հատուկ առավելություններին, աշխատանքի պատմական ձևերին և արտադրող մասսաների դերին նոր արտադրողականության վերելքի պրոցեսում, բազմաստվածության համեմատությամբ քրիստոնեությանը հատուկ առավելություններին, քրիստոնեության տարածման պայմաններին, ֆեոդալիզմի և ճորտության միջև գործող անքակտելի կապերին, տնտեսության և քաղաքականության փոխադարձ հարաբերություններին, հայ պատմագրության դասակարգային բնույթին և ընդհանրապես կուլտուրայի պայմանավորվածությանը հասարակական բազիսով։

Աշխատությունը ընթերցողին չի կարող համոզել նրանում, որ հայ ժողովրդի պատմությունն այս ինչ ֆորմացիաներում եղել է դասակարգային պայքարի պատմություն, քանի որ նրանում բացակայում է մի շարք կարևոր հարաբերությունների ու իրադարձությունների դասակարգային վերլուծությունը։ Նրանում ավելի ուշադրություն ու տեղ է նվիրվում ընդհանուր շահերին, ժողովրդի վիճակին, քան այդ վիճակը պայմանավորող դասակարգային հարաբերություններին։ Ճիշտ է, աշխատության մեջ հանդիպում ենք դասակարգային պայքարի մի քանի խոշոր օրինակների մանրամասն շարադրությանը, սակայն պատմական ամբողջ պրոցեսի դասակարգային վերլուծության խնդիրը դրանով չի լուծվում։ Դասակարգային հասարակության պատմության շարժիչ ուժը դասակարգային պայքարն է, որին և պատկանում է ամբողջ պրոցեսի որոշիչ դերը, այնինչ հակադիր դասակարգերի միասնությունը միշտ և ամենուրեք կրում է պայմանական և ժամանակավոր բնույթ, ընդ որում դասակարգային պայքարը երբեք չի դադարում, ինչպես, օրինակի համար, մեր օրերին այդ տեղի ունի բանվորների և կապիտալիստների միջև կնքվող պայմանագրերից հետո, նույնիսկ պայմանագրերը ստորագրելու մոմենտներին։

Ի վերջո, անհրաժեշտ եմ համարում նկատել, որ հոդվածիս նպատակը ոչ այնքան «Պատմության» առաջին հատորի հեղինակների քննադատությունն է, որքան բարձրացրածս հարցերի կոլեկտիվ մշակման ու լուծման բուռն ցանկությունը։

Հ. ԱԶԱՏՅԱՆ